մէջ հայի եւ Հայաստանի յիշատակութիւնն իսկ չկայ։

Լոզանի դաշնագրի մասին շատ է գրուած. բայց նրան հետեւող մի փաստ կայ, որ արժանի է մասնաւոր յիշատակութեան մեր օրերի քաղաքական բարքերի գնահատումի տեսակէտից։

Ազգերի Ընկերակցութեան մէջ ծրագիր էր մշակւում 1924 թուին 50 հազար հայ փախստական տեղաւորել կովկասեան Հայաստանում։ Այս ձեռնարկի համար մէկ միլիոն ֆունդ ըստէրլինգի նախահաշիւ էր կազմուած։ Ազգերի Ընկերակցութեան Խորհուրդը դիմում է անդամ պետութիւններին հայթայթելու յիշեալ գումարը։ Եւ ահա Բոլդուին ու Ասքուիթ երկուսն էլ Անգլիայի վարչապետ, մի ընդարձակ նամակով դիմում են օրուան վարչապետ Մակդոնալդին եւ վերյուշելով այն յանձնառութիւնները, որ Դաշնակից պետութիւնները ունեն հանդէպ Հայաստանի, թուելով այն բոլոր զոհաբերութիւնները, որ հայ ազգը ընդունեց ի նպաստ Դաշնակիցների, աւելացնելով նաեւ, որ այս պատճառով «հայ ժողովրդի երկու երրորդը — տղամարդ, կին, երեխայ—ջնջուեցին ամենաբարբարոս եղանակներով»։ Միաժամանակ ընդունելով, որ «Մեծն Բրիտանիան իր պատասխանատուութեան բաժինն ունի թիւրքահայութեան խսպառ ցաք ու ցրիւ լինելու մէջ», երկու պատուարժան վարչապետները՝ Բոլդուին եւ Ասքուիթ՝ առաջարկում են, որ «կառավարութիւնը անմիջապէս մի կարեւոր նուէր անի» հայ փախստականների տեղաւորման համար։ Այս բոլորը լաւ. սակայն նրանք աւելացնում են հետեւեալ յաւիտենական խօսքերը, թէ այդ հաւաքուելիք գումարը «պէտք է նկատուի որպէս վերջնական հաշուեյարդար Դաշնակիցների պատասխանատուութեան հայերի հանդէպ»։

Եթէ այս բոլորը վերածենք պարզ մարդկային լեզուի, առաջարկւում էր մէկ միլիոն մեր նահատակների արեան իբր փոխարժէք մէկ միլիոն ֆունդ ստերլինգ — ուրիշ խօսքով՝ մէկ հայը Դաշնակիցների աչքում արժէր մէկ ոսկի, այսինքն՝ 125 ֆր...

Աւելացնենք, որ այդ էլ երեւի չափազանց թուաց, չի հաւաքուեց եւ դժբախտ ու միամիտ Նանսէն դեռ բազարլըգը չարունակում է, այս տարի արդէն մօտեցել էր կարծեմ 30–40 ֆրանքի... մօտաւորապէս այդ գնով Ստամբուլի հրապարակներում պատերազմի ժամանակ հայ աղջիկներ ու որբեր էին վաճառում... Կանգ առնենք այստեղ։

Անհնարին է չարունակել։

Մարդ շնչարգելում է. օդը պակասում է ոչ միայն փակ սենեակների մէջ, այլ դուրսը՝ բաց երկնքի տակ։

Երբ մարդկային կեանքը, մարդ արարածը, որ միակ նպատակն է քաղաքակրթութեան, դառնում է հնչուն ոսկի — զարհուրում ես ոչ մարդի համար, այլ քաղաքակրթութեան։

Հայաստանն ի՞նչ է որ — մի խղճուկ, աւեր երկիր. բայց խղճմտանքը տիեզերական. այս ի՛նչ ահաւոր վէրք է մարդկութեան սրտին։

Անշուշտ աշխարհի քաղաքական պատմութիւնը միշտ հարուստ է եղած վրդովեցուցիչ դայթակղութիւններով։

Բայց այս ծաւալը, այս խորութիւնը եւ այս վրան բաց արհամարհանքը դէպի հասարակական դգացմունքի պարկեշտութիւնը։

Այնպէս կ՝ուզէի, որ անգլիական այս երկու խոշոր պետական անձնաւորութիւնները գրած չլինէին այս սպանիչ նամակը եւ այդ ոչ թէ Հայաստանի համար, այլ աշխարհի ու քաղաքակրթութեան համար. այնպէս կ՝ուզէի, որ բարբարոս Արեւելքը երբեք չիմանար այդ փաստաթղթի գոյութիւնը, որպէսզի հաւատի վերջին նշոյլը չի մեռնէր դէպի քաղաքակրթութիւնը. տարաբախտաբար մեծ ազգերն այսօր նման են այն խելակորոյս ամուսիններին, որոնք իրենց ննջասենեակի գաղտնիքը փռում են փողոցներում ստահակ պատանիներին ի տես։

Մեր օրերի յատկանիշն է, որ գաղտնի դիւանագիտութիւնը հրապարակ իջնի սերունդներին անառակացնելու համար։

Եւ այդ ախտաւոր դասը ամենից շատ եւ ամենից լաւ իւրացրեց Թիւրքը։

* * *

Պատերազմի ընթացքին Դաշնակիցները յանախ մեղադրեցին Գերմանիային, թէ նա իր գործելակերպով արհամարհում ու նախատում է մարդկային խղճմտանքը։